

# Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ԿՈՐՊԱԶՈՎԻՆ

Սովետական Միութեան Համայնավար  
Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի  
Առաջին ֆարտուղարին,

Մոսկուա

*Յարգելի Պր. Առաջին ֆարտուղար  
Միխայիլ Կորպաչով, ամբողջ աշխարհի  
նաեւ արտասահմանի հայութիւնը խան-  
դավառութեամբ կ'ընդունի ու մօտէն  
կը հետեւի Ձեր ճիգերուն, որոնք վերա-  
փոխումներ կը բերեն Սովետական  
Միութենէն ներս, ամրապնդելով խաղա-  
ղութիւնն ու ժողովուրդներու բարեկա-  
մութիւնը:*

*Կլասնոսթ, Փերեսթրոյֆան՝ վերակա-  
ռուցումը, նոր հորիզոններ բացաւ հայ  
ազգին առջեւ: Ձեր ժամանակաշրջանին  
է որ հայերը Սովետական Միութեան  
եւ արտասահմանի մէջ յուսադրուած են  
եւ վստահ որ արդար ու տեւական կար-  
գադրութիւն մը պիտի ըլլայ Հեռնային  
Հարարադի ինքնավար մարզին համար:*

*Այս օրերուն հայերը Հայաստանի  
մէջ խաղաղ ցոյցեր կը կազմակերպեն,  
պահանջելով վերամիացումը Հարարադի*

# Ս. Դ. ՀՆՋԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ԿՈՐՊԱԶՈՎԻՆ

Հայաստանի խորհրդային հանրապետության, Սովետական Միության սահմանադրության շրջագիծէն ներս: Ղարաբաղի ժողովուրդը եւս նոյնը կը պահանջէ:

Մեծն Բրիտանիոյ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը, իր բոլոր՝ երիտասարդական, մշակութային, մարզական, կրթական կազմակերպութիւններով կը միանայ եւ զօրավիգ կը կանգնի Հայաստանի խորհրդային հանրապետության եւ Ղարաբաղի ժողովուրդին:

Կը խնդրենք Պր. Կորպաչով, որ անձնապէս հետաքրքրուի մեր խաղաղասէր ժողովուրդի պահանջով: Կը սպասենք շուտափոյթ դրական լուծումի մը:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան  
Մեծն Բրիտանիոյ Վարիչ Մարմին